

ՆՈՐԾՆՏԻՐ ՊԱՊԸ ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ.

Ինչպէս ծանուցած էինք Սիօնի նախորդ թիւով, Կարտինալներու ժողովը 16 Հոկտեմբերին Պապ ընտրած էր Լեհաստանի Քրաքու քաղաքի Կարտինալը՝ Քարօ Ռէփ-Թօա: 1623էն ի վեր առաջնու անգամն էր որ ոչ-Խուալացի մը կը բարձրանար Պապական Աթոռ: Ըստութիւնը՝ թէեւ կարճ ատենի մը համար — յուսախարութիւն առթող անակնակալ մը եղաւ Խուալացի Կարտինալներէն ոմանց — եւ ի մասնաւորի հաւանական թեկնածուներուն — եւ Ս. Պետրոսի հրապարակը խոնուած բազմութեան համար: Բայց քանի մը գայրկեան ետք, երբ նորընտիր Քահանայապետը — ինքն ալ շշմած անակնակալէն — իր հայրական անդրանիկ օրնութիւնը իր հօտին տալու համար կ'երեւէր տանհարի պատշգամին, ժողովուրդը խանդագին ու խելայեղ ծափահարութիւններով ողջունեց իր նոր Հոգեւոր Պետը: Եատերու համար ընտրութիւնը նկատուեցաւ Եկեղեցին ընդհանրական հանգամանքը շեշտող դրական երեւոյթ մը:



Ազենք Ս. Պատրիարք Հայրը կը ընուհաւորէ Մըրազան Քահանայապետը:

Նորընտիր Պապը ծնած է 18 Մայիս 1920ին, Լեհաստանի (Փօլոնիա) Քրաքու քաղաքի Ֆատուլիս արուարձանը: 20րդ դարու ընթացքին առաջին անգամն էր որ 60 տարիքը լթեւակոխած Կարտինալ մը կը կոչուէր վարելու զեկը Հռովմի մեծ Եկեղեցիին: Մայրը կորսնցնելու դժբախոսութիւնը ունեցած է կանուխէն, իսկ հայրը զոհ գացած է թ. Համաշխարհային Պատերազմի արհաւիրքներուն: Երիտասարդութեան օրերուն եղած է սփորի եւ չմշկելու (skiing) սիրահար մը: Կրօնական եւ աստուածաբանական ուսման հետեւելք ետք 1 Նոյմ. 1946ին ծեռնադրուած է քահանայ: Անմիջապէս ետք Հռովմ մեկնելով՝ տարի մը հետեւած է աստուածաբանական բարձրագոյն դասընթացքի: Վերադարձականութիւնի մը 1958 Սեպտեմբերին կը ծեռնադրուի եպիսկոպոս եւ կը նշանակուի առաջնորդ Օմազի քաղաքին: 1964ին կը կոչուի իր ծննդավայրի առաջնորդական նակուի առաջնորդ Օմազի քաղաքին:

պաշտօնին: Նոյն տարին, բանի մը բարձրաստիճան կղերականներու հետ, ուստի կու գայ Ս. Երկիր: 26 Յունիս 1967ին, Պօլոս Զ. Պապը կը բարձրացնէ զինք Կարտինալու թեան աստիճանին, որմէ ետք կը պաշտօնավարէ Վատիկանի Քարտուղարութեան մէջ:

Ն. Սրբութեան Գահակալութեան հանդէսը, Ս. Պետրոսի ընդարձակ հրապարակին վրայ կիրակի, 22 Հոկտեմբերի առաւատուն (Նորին Սրբութեան փափաքին համածայն, զգիկելու համար մարզասէրները կիրակի յիտ միջօրէններուն խտալական հեռաւեսիլին ցուացադրած մարզական խաղարկութիւնները դժիտելու հանոյքէն) կատարուած, իր նախորդին նման եղաւ պարզ ու կարճատեւ բայց տպաւորիչ: Զանազան երկիրներէ ու Եկեղեցիներէ ժամանած պատուիրակութեանց մէջ էին Ս. Աթոռոյս Ամենապատի Գահակալը, որուն Կ'ընկերանային Արեւմտեան Երոպայի Կաթողիկոսական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Գերշ. Տ. Մերովէ Արքեպոս. Մանուկեանը եւ Ս. Աթոռոյս Դիւնապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Անէմեանը: Ներկայ էր նաեւ Ամերիկայի Միացեալ Նախանձաց Նախագահին մայրը՝ Տիկին Լիլիան Քարթըր: Այդ առթիւ, Ն. Սրբութիւնը խօսեցաւ բովանդակալից ճառ մը՝ բոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներուն ուղղուած, զոր կու տանք ստորեւ. —

Սիրելի Եղբայրներ ի Քրիստոս,

Նախ կը փափաքինք մեր սրտի խորերէն շնորհակալութիւն յայտնել որ եկած էք այստեղ: Զեր ներկայութիւնը իրական փաստն է հասարակաց մեր կամքին հաստատելու հետզհետէ աւելի սեղմ կապէր մեր միջիւ եւ յաղթահարելու անցեալէն ժառանգուած բաժանումներուն, որոնք, ինչպէս ըստ ենք արդէն, անհանդուրժելի գայթակղութիւն մըն են, որ արգելք կը հանդիսանայ բարոզելու Քրիստոսով տրուած փրկութեան բարի լուրջ եւ յայտնելու տպատագրութեան մնծ յոյսը, որուն այնիքան պէտք ունի այսօրուան աշխարհը:

Առաջին մեր այս հանդիպումին, Կ'ուզենք ըսել ձեզի մեր ամուր կամքը յառաջ երթալու միութեան համրուն վրայ, Վատիկանի Երկրորդ ժողովի ոգիին եւ մեր նախորդներու օրինակին հետեւողութեամբ: Գեղեցիկ հանգրուան մը անցած ենք արգեն, սակայն պէտք չէ՝ կանգ առնել հասնելէ առաջ նպատակին, իրազործելէ առաջ այդ միութիւնը, զոր Քրիստոս ցանկացան իր Եկեղեցիին եւ որուն համար աղօթեց:

Քրիստոսի կամքը, անհրաժեշտութիւնը դաւանելու զՔրիստոս, ահա պատճառը որ կը մնէ մեզ բոլորս եւ իւրաքանչիւրը մեզմէ բնաւ յոզնելու եւ չվհատելու մեր այս նիզին մէջ: Մենք վստահ ենք թէ Ան որ սկսաւ այս գործը մեր մէջ, առատօրէն պիտի տայ մեզի ոյժը յարատեւելու եւ հասցնելու զայն իր իրազործումին:

Հանեցէք ըսել անոնց, որոնց ներկայացուցիչներն էք եւ ամէնուն թէ Կաթոլիկ Եկեղեցի մասնակցութիւնը Եքիւմենիք շարժումին, այնպէս ինչպէս յայտարարուեցաւ պաշտօնապէս Վատիկանի Երկրորդ ժողովին, անյետադարձ է:

Երջանիկ ենք Եղբայրական վատահութեան յարաբերութիւններէն եւ գործակցութենէն Միութեան մեր Քարտուղարութեան հետ: Մենք զիտենք թէ անոր հետ կը փրկուածներ, համբերութեամբ, լուծումը տարբերութիւններուն, որոնք կը բաժնեն մեզ տակաւին, միջոցները միասին յառաջանալու, հետզհետէ աւելի ամրոջական հաւատարմութեամբ, Ծիսուս Քրիստոսով յայտնուած նշմարտութեան բոլոր երկներուն նկատմամբ: Կը վստահեցնենք թէ պիտի ընենք ամէն բան օգնելու համար ծեզի:

Թող միրոյ եւ ճշմարտութեան Հոգին տայ որ յանախ տեսնենք զիրար, աւելի մօտիկացած իրարու, հնտղինէտէ աւելի խոր հաղորդութեամբ մեր միակ Փրկիչի խորհուրդով: Թող Կոյսն Մարիամ ըլլայ մեզի համար Սուրբ Հոգիի հնազանդութեան օրինակը, որ ամենախոր կեղունն է Եքիւմենիք կեցուածքին: Թող մեր պատասխանը ըլլայ, անոր նման. «Ես Քու աղախինն եմ, թող Քու ըսածիդ համածայն ըլլայ ինձի» (Ղկ. Ա. 19):

* * *

Այս ուրախ առկիթով, Ուրբաթ, 20 Հոկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 9.30ին, Հատինաց Պատրիարք Մօնս. Ճիաքօմօ Պէլթրիթի հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ս. Յարութեան Տաճարին մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանին առջեւ, որմէ ետք կատարուեցաւ Գոհարանական Մաղթանք: Ներկայ էին Պապական նուիրակ Մօնս. Ուիլերմ Քէրիւ, Ֆրանչիսկեանց Կիւսթու Հայր Մառլիկիուս Սաքի, Կաթոլիկ տէրութեանց հիւպատոսներ, պետական դէմքեր եւ տարրեր յարանուանութեանց ներկայացուցիչներ, որոնք ապա իրենց խնդակցութիւնը յայտնեցին Սրբազն Պատրիարքին: Ս. Յակոբուսանց Միաբանութիւնը կը ներկայացնէին Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Ասլանեան, Աւագ Թարգման Հոգէ. Տ. Ասպետ Արլ. Պալեան եւ Տիար Գէորգ Հինդլեան:

«Սիոն», յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Ուխտիս Միաբանութեան, իր խնդակցութիւնը կը բերէ Հռովմէական բոյր եւ մեծ Եկեղեցին, մաղթելով անոր նորընտիր Գահակալին երկար ու արդիւնաշատ պաշտօնավարութիւն, ի պայծառութիւն Քրիստոնեայ Աշխարհին:

